Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2025 թ. որոշմամբ
««ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն
հիմնադրամի 2024 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ԲԱՂՐԱՄՅԱՆ 24
1.3 Պետական գրանցման համարը		222.160.01136
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2009-09-02
1.5 ՀՎՀՀ-ն		00100778
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)11710122
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		
1.8 Էլեկտրոնային փոստը		haik.antoniann@gmail.com
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Գագիկ Արզումանյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	5	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ստացված ֆինանսական միջոցների նպատակը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	Կանոնադրական նպատակներով պայմանավորված	27,160,577
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ		
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը

Digitally signed by
ANTONYAN HAYK
2411630220
Date: 2025.06.30
15:42:21 AMT

10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	գրքեր	696,000
10.1.3 Ֆիզիկական անձինք		
	գրքեր	293,150
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Մանկական վերականգնողական կենտրոն	40,700,000	
Արենիում Արցախցի փախստականներին բնակարանային պայմանների բարելավում	2,388,520	
Տավուշի ջրհեղեղից տուժածներին օգնություն	1,159,060	
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	76,475,477	
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	44,247,580	

Նշումներ՝

Հիմնադրամի ՀԽ-ի որոշմամբ հիմնադրամը դիմել է լուծարման համաձայն ՀՀ օրենսդրության

Ֆինանսական հաշվետվություններն ու ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ աուդիտն իրականացնող անձի (աուդիտորի) եզրակացությունը՝ 31 էջերից:

էջերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____

ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ»

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3 Անկախ աուդիտորական եզրակացություն

6 Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

7 Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

8 Զուտ ակտիվներում փոփոխությունների մասին հաշվետվություն

9 Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն

10 Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է «Երևան իմ սեր» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Երևան իմ սեր» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2024թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:
Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Հիմնադրամի 2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտի (ՓՄԿ-ների ՖՀՄՍ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար* բաժնում:
Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների:
Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Հանգամանքի շեշտադրում

Ինչպես ներկայացված է ֆինանսական հաշվետվություններին կից Ծանոթագրություն 13-ում, Հիմնադրամի խորհուրդը ֆինանսական միջոցների բացակայության պատճառով 2025 թվականի մարտի ամսին կայացրել է որոշում Հիմնադրամը լուծարելու վերաբերյալ և դիմել է համապատասխան իրավասու մարմիններին: Մեր կարծիքը չի ձևափոխվել այս հարցի կապակցությամբ:

Այլ հանգամանք

Կազմակերպության 2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով այդ հաշվետվությունների վերաբերյալ 2024թ. հունիսի 18-ին արտահայտել է չձևափոխված կարծիք:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:
Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Հիմնադրամը լուծարելու կամ Հիմնադրամի գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:
Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:
ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- բացահայտում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում.
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար.

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը.
- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը:
  Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Հիմնադրամին դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ բացահայտումները՝ ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների և դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

«Աուդիտ Արմենիա» ՓԲԸ
17 հունիսի, 2025թ.
Ք. Երևան

Աննա Ավետիսյան

Տնօրեն-Բաժնետեր
Աուդիտի ղեկավար

Հազար դրամ	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	4	18,623	31,811
Ոչ նյութական ակտիվներ	5	106	163
ժամկետային ավանդներ	6	-	68,858
		18,729	100,832
Ընթացիկ ակտիվներ			
Կապիտալացված շինարարական աշխատանքներ	7	784,319	784,319
Պաշարներ		1,728	1,785
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	1,001	951
ժամկետային ավանդներ	6	22,683	-
Դրամական միջոցներ	9	5,347	5,256
		815,078	792,311
Ընդամենը ակտիվներ		833,807	893,143
Հիմնադրամին վերագրելի զուտ ակտիվներ		27,932	44,453
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	10	6,163	6,806
		6,163	6,806
Ընթացիկ պարտավորություններ			
Հետաձգված հասույթ	11	790,651	837,264
Կրեդիտորական պարտքեր	12	4,145	3,936
Շահութահարկի գծով պարտավորություն		4,916	684
		799,712	841,884
Ընդամենը պարտավորություններ		833,807	893,143

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 17-ին՝

Տնօրեն

Գագիկ Արզումանյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Անտոնյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ

	Ծանոթ.	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Միջոցների իրացումից եկամուտ	13	46,613	58,830
Այլ օգուտներ, զուտ	14	28,514	147
Համախառն շահույթ		75,127	58,977
Ծրագրային ծախսեր	13	(46,613)	(58,830)
Անձնակազմի ծախսեր		(15,868)	(15,942)
Մաշվածություն և ամորտիզացիա		(7,575)	(12,171)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր		(11,585)	(11,184)
Այլ ծախսեր		(4,480)	(2,222)
Գործառնական գործունեությունից վնաս		(10,994)	(41,372)
Ֆինանսական եկամուտ	15	1,377	3,433
Փոխարժեքային տարբերությունից օգուտ/վնաս	16	(1,988)	1,525
Շահույթ մինչև հարկերը		(11,605)	(36,414)
Շահութահարկի գծով ծախս	17	(4,916)	(684)
Տարվա արդյունք		(16,521)	(37,098)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		(16,521)	(37,098)

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 17-ին՝

Տնօրեն

Գագիկ Արզումանյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Անտոնյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Հազար դրամ	Կուտակված արդյունք	Ընդամենը
2023թ հունվարի 1-ի դրությամբ	81,551	81,551
Տարվա արդյունք	(37,098)	(37,098)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(37,098)	(37,098)
2023թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	44,453	44,453
Տարվա արդյունք	(16,521)	(16,521)
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(16,521)	(16,521)
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	27,932	27,932

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 17-ին՝

Տնօրեն

Գագիկ Արզումանյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Անտոնյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը։

«ԵՐԵՎԱՆ ԻՄ ՍԵՐ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
2024Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 31-ԻՆ ԱՎԱՐՏՎԱԾ ՏԱՐՎԱ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Նվիրատվություններից մուտքեր	-	4,291
Ծրագրային ծախսերի գծով վճարումներ	(58,183)	(52,150)
Աշխատակիցներին տրվող վճարներ	(12,814)	(12,314)
Վարչական և այլ ծախսերի գծով վճարներ	(5,478)	(33,700)
Վաճառված նյութերից մուտքեր	473	480
Այլ մուտքեր	28	-
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	(75,974)	(93,393)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր		
Մարված ավանդներ	49,586	71,716
Ստացված տոկոսներ ժամկետային ավանդների գծով	1,472	16,616
Հիմնական միջոցների օտարումից մուտքեր	25,187	-
Հիմնական միջոցների ձեռքբերում	-	(6,904)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր	76,245	81,428
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		-
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ հոսք	271	(11,965)
Ժամանակաշրջանի սկզբի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,256	17,386
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը դրամական միջոցների վրա	(180)	(166)
Ժամանակաշրջանի վերջի դրությամբ դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,347	5,255

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 17-ին՝

Տնօրեն

Գագիկ Արզումանյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Անտոնյան

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը։

1 Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Երևան իմ սեր» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադիր կամավոր գույքային վճարի հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն է, որը հետապնդում է սոցիալական, հոգևոր, գիտական, մշակութային և այլ հանրօգուտ նպատակներ և հիմնադրվել է 2009թ. օգոստոսի 04-ին հիմնադիր որոշմամբ և գործում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Միջազգային պայմանագրերի, կանոնադրության և այլ իրավական ակտերի համաձայն:

Հիմնադրամի կառավարման մարմիններն են՝ հոգաբարձուների խորհուրդը (այսուհետ նաև Խորհուրդ) և Հիմնադրամի տնօրենը (այսուհետ՝ Տնօրեն):

Հիմնադրամի հիմնական նպատակներն են.

- Աջակցել Երևանի քաղաքային համայնքի սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրների լուծմանը և դրան ուղղված պետական, միջազգային և այլ ծրագրերին ու միջոցառումներին:
- Նպաստել Երևանի պատմամշակութային հուշարձանների, թանգարանների, հոգևոր-մշակութային կոթողների վերականգնմանը և պահպանմանը:
- Աջակցել հուշարձանների և ճարտարապետական կոմպոզիցիաների նոր նախագծերի մշակմանը և իրականացմանը:
- Աջակցել և նյութապես օգնել Երևան քաղաքում գործող թանգարաններին, մշակութային, կրթական (համալսարան, ինստիտուտ, քոլեջ, վարժարան, դպրոց), մարզական և նախադպրոցական կազմակերպություններին:
- Աջակցել մշակույթի բնագավառում փառատոնների, մրցույթների, սիմպոզիումների, ցուցահանդեսների և շնորհանդեսների կազմակերպմանը:
- Աջակցել և նյութապես օգնել երիտասարդ լավագույն մարզիկներին, գիտության և կրթության, արվեստի և մշակույթի բնագավառի շնորհալի երիտասարդներին:
- Իրականացնել ծրագրեր ուղղված ազգային գաղափարի և արհեստների պահպանմանը:
- Իրականացնել ծրագրեր՝ ուղղված շնորհաշատ երեխաների կայացմանը և մատաղ սերնդի հայեցի և հոգևոր դաստիարակությանը:
- Աջակցել զբոսաշրջության զարգացմանը:
- Ստեղծել նյութական և ֆինանսական միջոցներ սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին (5-ից ավելի երեխա ունեցող), ծերերին, հաշմանդամներին, ծնողազուրկ երեխաներին, ազատամարտիկներին, աշխատանքի և պատերազմի վետերաններին, օգնելու և աջակցելու համար:
- Բնապահպանական, առթղջապահական, գիտական, կրթական, մարզական և հոգևոր մշակութային ծրագրերի իրականացումը կամ դրանց աջակցումը:

  Հիմնադրամն անձամբ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն և իրավունք ունի զբաղվել կանոնադրությամբ նախատեսված ձեռնարկատիրական գործունեության տեսակներով: Ձեռնարկատիրական գործունեության տեսակներն են.

- Շենքերի և շինությունների (բնակելի, արտադրական, մշակութային, կրթական, սպորտային) կառուցում և վերանորոգում,
- Ջրմուղ համակարգի, ջրագծերի կառուցում և վերանորոգում,
- Ճանապարհների կառուցում և նորոգում
- Շինանյութերի արտադրություն (շինարարական սալիկներ, սյուներ, բլոկներ և այլն):
- Շինանյութերի վաճառք (շինարարական բլոկներ, սալիկներ, սյուներ, ցեմենտ, գաջ):
- Պարենային և ոչ պարենային ապրանքների մեծածախ և մանրածախ առևտուր:
- Հանգստի (համերգներ, պարասրահներ, ատրակցիոններ, ցուցահանդեսներ) կազմակերպում,
- Տուրիզմ:

Խորհրդի անդամներն են՝

N	Անդամ	
1.	Արմեն Սարգսյան	Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նախագահ
2.	Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ	Ամենայն Հայոց Կաթողիկոս
3.	Ն.Գ. Ջոն Գալագեր	Միացյալ Թագավորության դեսպան Հայաստանում
4.	Արմաիս Կամալով	Մ. Լոմոնոսովի անվ. Մոսկվայի պետական համալսարանի համալսարանական կլինիկայի տնօրեն, Ռուսաստանի ԳԱ անդամ, դոկտոր, պրոֆեսոր (ՌԴ)
5.	Դեյվիդ Արմստրոնգ-Ջոունս	Սնոուդոնի 2-րդ կոմս (Միացյալ Թագավորություն)
6.	Էնզո Բենինյի	«Էլեետտրոնիկա գրուպ» խմբի նախագահ և գլխավոր գործադիր տնօրեն (Իտալիա)
7.	Տիգրան Ավինյան	Երևանի քաղաքապետ
8.	Մարկ Գրիգորյան	Լրագրող, դասախոս, Ալեքսանդր Թամանյանի անվան ճարտարապետության ազգային թանգարան-ինստիտուտ
9.	Պերճ Սեդրակյան	Հայկական բարեգործական ընդհանուր միության նախկին նախագահ
10.	Վաչե Մանուկյան	Հայկական բարեգործական ընդհանուր միության հոգաբարձուների խորհրդի նախագահ
11.	Հակոբ Դիդիզյան	Hachma խմբի նախագահ

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը։

2024թ. Կազմակերպության աշխատակիցների միջին թվաքանակը կազմել է 5 մարդ (2023թ.՝ 5 մարդ)։

Կազմակերպության հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Ք. Երևան, Դեմիրճյան փողոց, տուն 26։

2 Պատրաստման հիմքերը

2.1 Համապատասխանություն

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Փոքր և Միջին Կազմակերպությունների ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՓՄԿ ՖՀՄՍ) համաձայն, ինչպես հրապարակվել է Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտների Խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից։

2.2 Ճանաչման հիմքեր

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի սկզբունքով։ Այլ չափման հիմունքներ կիրառելիս Կազմակերպությունը ներկայացնում է բացահայտումներ համապատասխան ծանոթագրություններում։

2.3 Գործառնական և ներկայացման արժույթ

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը հայկական դրամն է (դրամ), որն էլ հանդիսանում է Կազմակերպության գործառնական արժույթը, քանի որ այն լավագույնս արտացոլում է ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած իրադարձությունների և Կազմակերպության գործարքների տնտեսական բովանդակությունը։

Սույն ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են հայկական դրամով, քանի որ ղեկավարության համոզմամբ այս արժույթն առավել օգտակար է Կազմակերպության ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար։ Դրամով ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար միավորը։

2.4 Անընդհատություն

Ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ոչ անընդհատության հիմունքով, հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հիմնադրամի խորհուրդը որոշում է կայացրել դադարեցնել Հիմնադրամի գործունեությունը ֆինանսավորման աղբյուրների բացակայության պատճառով:

2.5 Գնահատումների և դատողությունների կիրառում

ՓՄԿ-ների ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է, որպեսզի Կազմակերպության ղեկավարությունը կարևոր գնահատումներ և ենթադրություններ կատարի, որոնք ազդեցություն են գործում ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ ակտիվների և պարտավորությունների գումարների, ինչպես նաև հաշվետու տարվա եկամուտների և ծախսերի գումարների վրա:
Նշանակալի ոլորտները, որոնք ներառում են ավելի բարձր աստիճանի դատողություն, որտեղ ենթադրություններն ու գնահատումները կարևոր են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտվում են ֆինանսական հաշվետվությունների կից ծանոթագրություններում

2.6 Ֆինանսական հաշվետվությունների կազմ

Ֆինանսական հաշվետվություններում ներառված են՝

ա) ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն՝ ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ընթացիկ և ոչ ընթացիկ ակտիվներն ու պարտավորությունները ներկայացվում են առանձին դասակարգմամբ.

բ) ֆինանսական արդյունքի մասին մեկ հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Կազմակերպությունը ներկայացնում է շահույթում կամ վնասում ճանաչված ծախսերի բաժանումը (վերլուծումը)՝ օգտագործելով դրանց գործառույթի վրա հիմնված դասակարգումը.

գ) դրամական հոսքերի մասին հաշվետվություն՝ տվյալ ժամանակաշրջանի համար: Գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքերի մասին տեղեկատվությունը ներկայացվում է՝ օգտագործելով ուղղակի մեթոդը: Վճարված տոկոսները դասակարգվում են որպես գործառնական, ստացված տոկոսներն ու շահաբաժինները՝ որպես ներդրումային գործունեությունից առաջացող դրամական հոսքեր: Վճարված հարկերը դասակարգվում են որպես գործառնական գործունեությունից առաջացող դրամական հոսքեր:

դ) ծանոթագրություններ, որոնք բաղկացած են հաշվապահական հաշվառման քաղաքականության նշանակալի մասերի համառոտ նկարագրից և այլ բացատրական տեղեկատվությունից.

Ֆինանսական հաշվետվություններում բացահայտվում է ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր գումարների՝ նախորդ ժամանակաշրջանի (նախորդ տարի) համադրելի տեղեկատվությունը: Երբ Կազմակերպությունը իր ֆինանսական հաշվետվություններում փոփոխում է հոդվածների ներկայացումը կամ դասակարգումը, ապա վերադասակարգում է համադրելի գումարները, բացի այն դեպքերից, երբ վերադասակարգումն անիրագործելի է:

2.7 Նոր և վերանայված ՖՀՄՍ ստանդարտներ

Ստորև ներկայացված նոր և վերանայված ստանդարտների կիրառման ազդեցությունը կրում է զուտ ցուցադրական բնույթ: Կազմակերպությունները պետք է վերլուծեն այս նոր և վերանայված ստանդարտների կիրառման ազդեցությունը ֆինանսական հաշվետվությունների վրա՝ հիմք ընդունելով հատուկ փաստեր և հանգամանքներ, և կատարեն համապատասխան բացահայտումներ:

Հիմնադրամը ընդունել է իր գործունեության համար կիրառելի և արդեն ուժի մեջ մտած բոլոր նոր և վերանայված ստանդարտները և մեկնաբանությունները, որոնք հրապարակվել են ՀՀՄՄԽ-ՄԿ-ի կողմից: Սույն ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ ՀՀՄՄԽ կողմից գործող ստանդարտների վերաբերյալ թողարկված, սակայն դեռևս չգործող որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ նախօրոք չեն ներդրվել Հիմնադրամի կողմից: Որոշ այլ նոր թողարկված ստանդարտներ և մեկնաբանություններ գործում են, սակայն չի ակնկալվում, որ դրանք Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա էական ազդեցություն կունենան: Հիմնադրամի ղեկավարությունը կանխատեսում է, որ ապագա բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Հիմնադրամի հաշվապահական հաշվառման քաղաքականությունում՝ սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից:

2.8 Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում

Կազմակերպությունը որոշել է պատրաստել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին մեկ հաշվետվություն՝ ենթագումարներով երկու առանձին հաշվետվությունների (ֆինանսական արդյունքների մասին առանջին հաշվետվություն, որին հետևում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն) փոխարեն:

3 Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1 Արտարժույթ

Արտարժույթով գործարքներ

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Կազմակերպության համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված միջին փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները պետք է վերահաշվարկվեն՝ կիրառելով հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված միջին փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող և արտարժույթով սահմանված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են գործարքի օրվա դրությամբ գործող միջին փոխարժեքով: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում: Ստորև ներկայացված են ՀՀ Կենտրոնական բանկի կողմից հրապարակված միջին փոխարժեքները.

	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ռուբլի	3.71	4.50
ԱՄՆ դոլար	396.56	404.79
Եվրո	413.89	447.90
Անգլիական ֆունտ ստեռլինգ	499.27	515.38

Արտարժույթով գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են ժամանակաշրջանի շահույթում կամ վնասում:

3.2 Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է ձեռքբերման գինը, ներկրման տուրքերը, հարկերը, որոնք ենթակա չեն վերադարձման և ուղղակիորեն վերագրվող ծախսումներ: Հիմնական միջոցների օտարման կամ դուրսգրման հետևանքով առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է վաճառքից հասույթի և ակտիվի հաշվեկշռային արժեքի տարբերությամբ և ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնական միջոցների՝ որպես առանձին ակտիվ հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները կապիտալացվում են դուրս գրված բաղկացուցչի հաշվեկշռային արժեքի հետ: Այլ հետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, երբ դրանք ավելացնում են հիմնական միջոցի միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները: Բոլոր այլ ծախսումները, ներառյալ պահպանման և վերանորոգման ծախսումները, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կատարվելու ժամանակաշրջանում:

Մաշվածությունը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում: Մաշվածության հաշվարկը սկսվում է այն պահից, երբ ակտիվը դառնում է մատչելի՝ իր նպատակային նշանակությամբ օգտագործելու համար: Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Արտադրական գույք, տնտեսական գույք, մեքենասարքավորումներ	3-8 տարի,

3.3 Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում

Մաշվող ակտիվները արժեզրկման համար վերանայվում են, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարը վաճառքի զուտ գնից և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը պետք է ավելացվի մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլինի, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեն: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է որպես եկամուտ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ համապատասխան ակտիվը հաշվառվում է վերագնահատված արժեքով, որի դեպքում արժեզրկումից կորստի ցանկացած հակադարձում դիտվում է որպես վերագնահատումից արժեքի աճ:

3.4 Վարձակալություն

Վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն բոլոր այն դեպքերում, երբ վարձակալության պայմաններով վարձակալված ակտիվի սեփականության հետ կապված ըստ էության բոլոր ռիսկերը և հատույցները փոխանցվում են Կազմակերպությանը: Բոլոր այլ վարձակալությունները դասակարգվում են որպես գործառնական վարձակալություն:

Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվների նկատմամբ իրավունքները վարձակալության սկզբի դրությամբ ճանաչվում են որպես Կազմակերպության ակտիվներ՝ վարձակալված գույքի իրական արժեքով (կամ նվազագույն վարձավճարների ներկա արժեքով, եթե այն ավելի ցածր է): Վարձատուի համապատասխան պարտավորությունը ներառվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ որպես ֆինանսական վարձակալության գծով պարտավորություն:

Վարձավճարները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության պարտականության նվազեցման միջև այնպես, որպեսզի ստացվի հաստատուն դրույք՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի նկատմամբ: Ֆինանսական վճարները հանվում են շահույթը կամ վնասը

չափելիս: Ֆինանսական վարձակալությամբ պահվող ակտիվները ներառվում են հիմնական միջոցներում և մաշեցվում են ու արժեզրկումից կորստի գծով գնահատվում են այնպես, ինչպես սեփականության իրավունքով պահվող ակտիվները:

Գործառնական վարձակալության գծով վճարման ենթակա վարձավճարները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքներում՝ գծային հիմունքով, համապատասխան վարձակալության ժամկետի ընթացքում:

3.5 Ոչ նյութական ակտիվներ

Ոչ նյութական ակտիվները սահմանվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը: Դրանք ամորտիզացվում են իրենց օգտակար ծառայության ընթացքում՝ կիրառելով ուղղագծային մեթոդը: Եթե կա որևէ հայտանիշ, որ տեղի է ունեցել ոչ նյութական ակտիվի ամորտիզացիայի դրույքաչափի, օգտակար ծառայության կամ մնացորդային արժեքի էական փոփոխություն, ապա ամորտիզացիան պետք է վերանայվի անյպես, որ արտացոլի նոր ակնկալիքները:

Համակարգչային ծրագրեր	-	5 տարի:

3.6 Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ձևավորվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է պաշարների ձեռքբերման, ինչպես նաև դրանք իրենց ներկայիս վիճակին և գտնվելու վայր հասցնելու ծախսերը:
Իրացման զուտ արժեքը վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման (վերանորոգման) ենթադրվող ծախսումները, ինչպես նաև վաճառքի կազմակերպման համար անհրաժեշտ ենթադրվող ծախսումները: Իրացման զուտ արժեքի գնահատումները հիմնվում են պաշարների իրացումից սպասվելիք գումարի՝ գնահատման պահին հասանելի առավել արժանահավատ վկայության վրա: Այդ գնահատումները կատարելիս հաշվի են առնվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տեղի ունեցած դեպքերի հետ ուղղակիորեն կապված գների կամ ծախսումների տատանումներն այնքանով, որքանով նման դեպքերը հաստատում են ժամանակաշրջանի վերջի դրությամբ առկա պայմանները:
Կազմակերպությունը ճշգրտում է պաշարների արժեքը մինչև վերականգնվող արժեք՝ դանդաղ շրջանառելի և վնասված պաշարների համար ստեղծելով <<Ապրանքանյութական պաշարների փչացման ու հնացման>> պահուստ:

3.7 Շնորհներ

Շնորհները, ներառյալ ոչ դրամային շնորհները՝ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են իրական արժեքով որպես հետաձգված եկամուտ: Շնորհը ճանաչվում է որպես եկամուտ՝ սիստեմատիկ եւ ռացիոնալ հիմունքով, ակտիվի օգտակար ծառայության ընթացքում: Ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերմանը վերաբերող շնորհները ներառվում են ոչ ընթացիկ պարտավորություններում եւ ճանաչվում են որպես եկամուտ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում գծային մեթոդով՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ընթացքում:

3.8 Պահուստ

Կազմակերպությունը պահուստը պետք է ճանաչի միայն այն դեպքում, երբ
ա) կազմակերպությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ունի պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք.
բ) հավանական է (այսինքն՝ ավելի շատ հավանական է, քան՝ ոչ), որ մարելու համար կազմակերպությունից կպահանջվի փոխանցել տնտեսական օգուտներ.
գ) պարտականության գումարը կարող է արժանահավատորեն գնահատվել:

Կազմակերպությունը պահուստը պետք է ճանաչի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես պարտավորություն, և պետք է ճանաչի պահուստի գումարը որպես ծախս:

Կազմակերպությունը պահուստը պետք է չափի հաշվետու ամսաթվի դրությամբ պարտականությունը մարելու համար պահանջվող գումարի լավագույն գնահատականով: Լավագույն գնահատականն այն գումարն է, որը կազմակերպությունը խելամտորեն կվճարեր՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ այդ պարտականությունը մարելու կամ այդ պահին երրորդ կողմին փոխանցելու համար:
Կազմակերպությունը պահուստի հաշվին պետք է մարի միայն այն ծախքերը, որոնց գծով պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.9 Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է՝ հաշվետու ամսաթվին գործող կամ, ըստ էության գործող հարկային դրույքաչափերով:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային հարաբերություններ կարգավորող նորմատիվ իրավական ակտերը), որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջում:
Այլ տեղեկատվության բացակայության դեպքում Կազմակերպությունը կիրառում է 18% դրույք՝ հարկվող ժամանակավոր տարբերությունների և օգտագործվող նվազեցվող (հանվող) ժամանակավոր տարբերությունների նկատմամբ:
Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չեն զեղչվում (դիսկոնտավորվում):
Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Կազմակերպությունը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում վերականգնվում է այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Ընթացիկ և հետաձգված հարկերը պետք է ճանաչվեն որպես եկամուտ կամ ծախս և ներառվեն տվյալ ժամանակաշրջանի շահույթի կամ վնասի մեջ, բացառությամբ հարկի այն մասի, որոնք վերաբերում են այն հոդվածներին, որոնք, նույն կամ տարբեր ժամանակաշրջանում, ճանաչված են՝
ա) այլ համապարփակ ֆինանսական արդյունքում՝ պետք է ճանաչվեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքում.
բ) ուղղակիորեն սեփական կապիտալում՝ պետք է ճանաչվեն ուղղակիորեն սեփական կապիտալում:
Կազմակերպությունը շահույթ կամ վնասի, այլ համապարփակ ֆինանսական արդյունքի և սեփական կապիտալի հոդվածները ներկայացնում է՝ հանելով համապատասխան հարկային հետևանքները:

Կազմակերպությունը ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և՝
բ) մտադիր է՝ կամ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:
Կազմակերպությունը հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝
ա) ունի իրավաբանորեն ամրագրված իրավունք հաշվանցելու հետաձգված հարկային ակտիվները հարկային պարտավորությունների դիմաց, և՝
բ) հետաձգված հարկային ակտիվը և հետաձգված հարկային պարտավորությունը վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից՝
-նույն հարկատուից (հարկվող միավորից), կամ՝

-տարբեր հարկատուներից, որոնք մտադիր են կամ մարել ընթացիկ հարկային պարտավորությունները և ակտիվները զուտ հիմունքով, կամ իրացնել ակտիվները և մարել պարտավորությունները միաժամանակ՝ յուրաքանչյուր ապագա ժամանակաշրջանում, որի ընթացքում ակնկալվում է հետաձգված հարկային պարտավորությունների և ակտիվների զգալի գումարների մարում կամ փոխհատուցում:

3.10 Եկամուտներ

Հիմնադրամը հասույթը պետք է չափի ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքով: Ստացված կամ ստացվելիք հատուցման իրական արժեքը հաշվի է առնում Հիմնադրամի կողմից տրամադրվող ցանկացած առևտրական զեղչերի, ժամկետից շուտ վճարման զեղչերի և քանակային զիջումների գումարները:

Հիմնադրամը ապրանքների վաճառքից ստացվող հասույթը պետք է ճանաչի, երբ բավարարվում են հետևյալ բոլոր պայմանները՝

ա) Հիմնադրամը գնորդին է փոխանցել ապրանքների սեփականության հետ կապված ռիսկերի և հատույցների նշանակալի մասը.
բ) Հիմնադրամը չի պահպանում ոչ կառավարման շարունակական մասնակցություն, որը սովորաբար բխում է սեփականության իրավունքից, և ոչ էլ վաճառված ապրանքների նկատմամբ արդյունավետ վերահսկողություն.
գ) հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը.
դ) հավանական է, որ գործարքի հետ կապված տնտեսական օգուտները կհոսեն Հիմնադրամ.
ե) գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսումները հնարավոր է արժանահավատորեն չափել:

Եկամուտներն ընդգրկում են նվիրատվությունները, դրամաշնորհները, ցանկացած տեսակի արտասովոր գործառնական եկամուտները, ինչպես նաև նախորդ հինգ խմբերում չդասակարգված այլ եկամուտներ:

Այլ գործարքներից ստացած հասույթը ճանաչվում է հետևյալ պայմանների առկայության դեպքում՝

- Կազմակերպությունը ծառայություններ կամ ապրանքներ ստացողին է փոխանցել աշխատանքային արդյունքները,
- Կազմակերպությունը չի պահպանում տիրապետման կամ կառավարման իր իրավունքը՝ ապրանքների կամ մատուցված ծառայությունների կամ արդյունքների հետագա օգտագործման նկատմամբ,
- Հնարավոր է արժանահավատորեն չափել հասույթի գումարը,
- Հավանական է, որ գործարքի հետ կապված տտնեսական օգուտները կհոսեն Կազմակերպություն,
- Հնարավոր է արժանահավատորեն չափել գործարքի հետ կապված կատարված կամ կատարվելիք ծախսերը:

3.11 Սեփական կապիտալ

Կազմակերպությունը չունի թողարկվող կապիտալի գործիքներ: Համաձայն «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի՝ հոգաբարձուները չեն կարող ունենալ նրա շահույթից բաշխման ակնկալիքներ:

3.12 Աշխատակիցներին հատուցումներ

Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումները ներառում են աշխատավարձերը, կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները (ինչպիսիք են, օրինակ, վճարովի տարեկան արձակուրդները և հիվանդության հետ կապված վճարովի արձակուրդները) և պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումները աշխատակիցների, ներառյալ տնօրենները և կառավարչական անձնակազմը, մատուցած ծառայության դիմաց Կազմակերպության կողմից ցանկացած ձևով տրվող փոխհատուցումներն են: Աշխատակիցների հատուցումներն են.
ա) աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ամբողջությամբ մարվում են այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.
բ) հետաշխատանքային հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի ազատման նպաստներից), որոնք ենթակա են վճարման աշխատանքային գործունեությունն ավարտելուց հետո.
գ) աշխատակիցների այլ երկարաժամկետ հատուցումներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են (բացի հետաշխատանքային հատուցումներից և ազատման նպաստներից), որոնք ոչ ամբողջությամբ են մարվում այն ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցում են համապատասխան ծառայությունը.
դ) ազատման նպաստներ, որոնք աշխատակիցների հատուցումներ են, որոնք ենթակա են վճարման որպես հետևանք կամ՝
- կազմակերպության որոշման՝ աշխատանքից ազատել աշխատակիցներին մինչև թոշակի անցնելու ընդունված ժամկետը, կամ
- աշխատակցի որոշման՝ աշխատակիցների թվաքանակի կրճատման դեպքում կամավոր ազատվել՝ փոխարենը ստանալով այդ նպաստները:

3.13 Ֆինանսական գործիքներ

Ճանաչում և ապաճանաչում

Ֆինանսական ակտիվները կամ ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Կազմակերպությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվները ապաճանաչվում են, երբ ֆինանսական ակտիվից ակնկալվող դրամական հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները լրանում են, կամ երբ ֆինանսական ակտիվները և բոլոր նշանակալի ռիսկերը և հատուցումները փոխանցվում են:

Ֆինանսական պարտավորությունները ապաճանաչվում են, երբ դրանք մարվում են, ենթակա չեն վճարման, չեղյալ են ճանաչվել կամ լրացել է դրանց ուժի մեջ լինելու ժամկետը:

Ֆինանսական ակտիվների դասակարգում և սկզբնական չափում

Ֆինանսական ակտիվները բաժանվում են հետևյալ կատեգորիաների.

- ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով,
- վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ,
- փոխառություններ և դեբիտորական պարտքեր:

Ֆինանսական ակտիվները սկզբնական ճանաչման ժամանակ վերագրվում են տարբեր կատեգորիաների՝ կախված գործիքի բնույթից և նպատակից: Ֆինանսական գործիքի կատեգորիան համապատասխանեցվում է այն սկզբունքին, որով չափվում է տվյալ գործիքը և այն հանգամանքին, թե արդյոք առաջացող եկամուտը և ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, թե ուղղակիորեն այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում:

Ֆինանսական ակտիվների հետ կապված բոլոր ծախսերը և եկամուտները որոնք ճանաչվում են շահույթում կամ վնասում, ներկայացվում են "Ֆինանսական ծախս", "Ֆինանսական եկամուտ" կամ "Այլ ֆինանսական արդյունքներ" հոդվածներում, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման, որը ներկայացվում է "Այլ ծախսեր" հոդվածում:

I. Ֆինանսական ակտիվներ՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով

Ֆինանսական ակտիվները՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, ներառում են առևտրային նպատակով պահվող ֆինանսական ակտիվները կամ այն ֆինանսական ակտիվները, որոնք

որպես չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով դասակարգվել Կազմակերպության կողմից՝ սկզբնական ճանաչման ժամանակ: Բոլոր ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք ենթակա չեն հեջավորման, դասակարգվում են այս կատեգորիայում:

Ածանցյալ ֆինանսական գործիքների գծով առաջացած ցանկացած օգուտ կամ վնաս հիմնված է իրական արժեքի փոփոխության վրա, որը որոշվում է՝ ուղղակիորեն վկայակոչելով գործող շուկայում գործարքները կամ գործող շուկայի բացակայության դեպքում՝ գնահատման մեթոդի միջոցով:

II. Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվներ

Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվները չափվում են իրական արժեքով՝ իրական արժեքի փոփոխությունները ուղղակիորեն ճանաչելով այլ համապարփակ արդյունքներում: Վաճառքի համար մատչելի ֆինանսական ակտիվների կատեգորիայում դասակարգված ֆինանսական գործիքներից առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում այն դեպքում, երբ նշված ակտիվները վաճառվում են կամ երբ ներդրումն արժեզրկվում է: Արժեզրկման դեպքում ցանկացած վնաս, որը նախկինում ճանաչվել էր այլ համապարփակ արդյունքներում, փոխանցվում է համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն: Սեփական կապիտալի գործիքներից առաջացած և համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված վնասները չեն հակադարձվում համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, այլ ճանաչվում են սեփական կապիտալում: Նախորդ ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ճանաչված պարտքային արժեթղթերի արժեզրկումից առաջացած վնասները հակադարձվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե հետագա աճը հիմնվում է այն դեպքի վրա, որը տեղի է ունեցել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ արժեզրկումից վնասի ճանաչումից հետո:

III. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

Ընթացիկ դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով: Հետագայում դրանք հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ հանած արժեզրկման պահուստը: Առևտրային դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստը ստեղծվում է այն ժամանակ, երբ առկա է օբյեկտիվ ապացույց, որ Կազմակերպությունը սկզբնապես սահմանված ժամկետներում չի կարող հավաքագրել վերադարձման ենթակա բոլոր գումարները: Դեբիտորի զգալի ֆինանսական դժվարությունները, վճարման հետաձգումը և վճարումների ուշացումները ցուցանիշ են այն բանի, որ առևտրային դեբիտորական պարտքն արժեզրկված է: Պահուստի գումարը ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված ապագա դրամական հոսքերի ներկա արժեքի տարբերությունն է:

Պահուստի մնացորդը ճշգրտվում է հաշվետու ժամանակաշրջանի համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում՝ ծախսի կամ եկամտի ճանաչման միջոցով: Հաճախորդի հաշվի մնացորդից դուրս գրվող ցանկացած գումար նվազեցվում է առկա կասկածելի դեբիտորական պարտքի պահուստից: Բոլոր դեբիտորական պարտքերը, որոնց հավաքագրումը գնահատվում է անհավանական, դուրս են գրվում:

IV. Մնացորդներ դրամարկղում և բանկերում

Մնացորդները դրամարկղում և բանկերում ներառում են կանխիկ միջոցները, բանկային հաշիվների մնացորդները:

Ֆինանսական ակտիվների արժեզրկում

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական ակտիվները, բացառությամբ այն ֆինանսական ակտիվների՝ չափվող իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով, գնահատվում են արժեզրկման հայտանիշի առկայության համար: Ֆինանսական ակտիվներն արժեզրկված են, եթե առկա է անկողմնակալ վկայություն, որ ֆինանսական ակտիվների սկզբնական ճանաչումից հետո տեղի ունեցած մեկ կամ մի քանի իրադարձություններ ազդել են ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների գծով արժեզրկման կորուստը հաշվառվում է ակտիվի հաշվեկշռային արժեքի և սկզբնական արդյունավետ տոկոսադրույքով զեղչված դրամական միջոցների ակնկալվող ապագա հոսքերի ներկա արժեքի միջև տարբերությամբ: Բոլոր ֆինանսական ակտիվների համար արժեզրկումից կորուստն ուղղակիորեն նվազեցվում է ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքից, բացառությամբ առևտրային դեբիտորական պարտքերի, որոնց հաշվեկշռային արժեքը նվազեցվում է կասկածելի պարտքի պահուստի միջոցով:

Բացառությամբ վաճառքի համար մատչելի սեփական կապիտալի գործիքների, եթե հետագա ժամանակաշրջանում արժեզրկման կորուստը նվազում է և նվազումը օբյեկտիվորեն կարելի է վերագրել արժեքի իջեցումից հետո տեղի ունեցած դեպքերին, ապա նախկինում ճանաչված արժեզրկման կորուստը հակադարձվում է՝ ճանաչվելով համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում այն չափով, որ հակադարձումը չհանգեցնի ֆինանսական ակտիվի այնպիսի հաշվեկշռային արժեքի, որը գերազանցի այն ամորտիզացված արժեքը, որը կլիներ, եթե այդ ֆինանսական ակտիվի արժեքի իջեցման հակադարձման ամսաթվի դրությամբ արժեզրկում ճանաչված չլիներ:

Ֆինանսական պարտավորությունների դասակարգում և սկզբնական չափում

Կազմակերպության ֆինանսական պարտավորությունները ներառում են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը, փոխառությունները:

I. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով:

4 Հիմնական միջոցներ

հազար դրամ	Տրանսպորտային միջոցներ	Արտադրական, տնետեսական գույք, մեքենա սարքավորումներ	Ընդամենը
Սկզբնական արժեք			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	33,430	63,475	96,905
Ավելացում, կապիտալացում	-	19,474	19,474
Օտարում, դուրսգրում	-	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	33,430	82,949	116,379
Ավելացում	-	329	329
Օտարում, դուրսգրում	(33,430)	-	(33,430)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	83,278	83,278
Կուտակված մաշվածություն			
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	22,770	47,912	70,682
Տարվա ծախս	4,179	9,707	13,886
Օտարում, դուրսգրում	-	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	26,949	57,619	84,568
Տարվա ծախս	2,516	7,036	9,552
Օտարում, դուրսգրում	(29,465)	-	(29,465)
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	64,655	64,655
Հաշվեկշռային արժեք			
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	6,481	25,330	31,811
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	-	18,623	18,623

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 49,437 հազ. դրամ (2023թ. 32,306 հազ.դրամ) սկզբնական արժեքով հիմնական միջոցներ հաշվառվում են զրոյական հաշվեկշռային արժեքով:

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հիմնական միջոցների նկատմամբ սահմանափակումներ չկան:

5 Ոչ նյութական ակտիվներ

Հազար դրամ	Համակարգչային ծրագրեր	Ընդամենը
Սկզբնական արժեք		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	285	285
Ավելացում	-	-
Օտարում, դուրսգրում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	285	285
Ավելացում	-	-
Օտարում, դուրսգրում	-	-
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	285	285
Կուտակված մաշվածություն		
2023թ. հունվարի 1-ի դրությամբ	65	65
Տարվա ծախս	57	57
Օտարում, դուրսգրում	-	-
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	122	122
Տարվա ծախս	57	57
Օտարում, դուրսգրում	-	-
2024թ դեկտեմբերի 31-ի դրությամբ	179	179
Հաշվեկշռային արժեք		
2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	163	163
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	106	106

6 Ժամկետային ավանդներ

Պայմանագրի N	Արժ.	Ավ. գումարի մնացորդ ԱՄՆ դոլարով	Ավ. գումարի մնացորդ Հազ.դրամով	Տոկոսադրույք	Կնքման ամսաթիվ	Մարման ժամկետ
0242955	ԱՄՆ դոլար	57,200	22,683	4.3%	10.06.2021	12.06.2025

Սույն ֆինանսական հաշվետվության վավերացման ամսթվի դրությամբ Հիմնադրամի ավանդները ամբողջությամբ մարվել են:

7 Կապիտալացված շինարարական աշխատանքներ

Հազ.ՀՀ դրամ	2024թ.	2023թ.
Սրբ. Սարգիս եկեղեցուն կից մանկական կենտրոն		
առ 1 հունվարի	779,319	779,319
առ 31 դեկտեմբերի	779,319	779,319
Սրբ. Հովհաննես եկեղեցուն կից մանկական կենտրոն		
առ 1 հունվարի	-	-
Զուտ իրացվելի արժեքի արժեզրկում	-	-
առ 31 դեկտեմբերի	-	-
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այգի		
առ 1 հունվարի	5,000	5,000
	5,000	5,000
առ 31 դեկտեմբերի	784,319	784,319

1. Սրբ. Սարգիս եկեղեցուն կից մանկական կենտրոն

Սրբ. Սարգիս եկեղեցուն կից մանկական կենտրոն կապիտալացված շինարարական աշխատանքները ներկայացնում են Հիմնադրամի կողմից Երևան քաղաքի Սուրբ Սարգիս եկեղեցուն կից մանկական կենտրոնի կառուցման հետ կապված ծախսերը: Կենտրոնն օգտագործվում է հաշմանդամություն ունեցող երեխաների և անապահով ընտանիքների համար նախատեսված միջոցառումների և ծրագրերի համար: Կենտրոնի տարբեր ծրագրերն ու միջոցառումներն իրականացվում են գործընկեր կազմակերպությունների հետ համագործակցությամբ: Ծրագրով նախատեսվում է, որ միջազգային մատչելիության չափանիշներին համապատասխանող այս կենտրոնում հաշմանդամություն ունեցող երեխաները կստանան ուսուցում և կսովորեն ինքնուրույն կյանքի համար անհրաժեշտ հմտություններ: Իրականացվում են մի շարք վերականգնողական և կրթական ծրագրեր, ինչպես նաև ճանաչողական և ֆիզիկական բուժական կուրսեր, որոնք կշարունակվեն նաև ապագայում:

Մանկական կենտրոնի նախագծումն ու կառուցումը սկսվել է 2013թ.-ին, 2017 թվականին մանկական կենտրոնի շինարարությունը գրեթե ավարտվել է: Մանկական կենտրոնի ավարտի վերջնական ակտի ստացումից և կենտրոնի համապատասխան պետական մարմիններում գրանցումն ավարտելուց հետո շենքը կփոխանցվի հողամասի սեփականատեր՝ Մայր Աթոռին՝ համաձայն Հիմնադրամի և Մայր Աթոռի միջև 2012թ. դեկտեմբերի 27-ին ստորագրված համաձայնագրի: 2023թ. և 2022թ. դեկտեմբերի 31- ի դրությամբ Հիմնադրամը և Մայր Աթոռը Երևանի քաղաքապետարանի հետ քննարկում են հողամասի սահմանների փոփոխության հարցը՝ պայմանավորված կառուցված շենքի և հողամասի անհամապատասխանությամբ: 2021թ. հողամասի սեփականատերը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, խնդրի լուծման համար դիմել է Երևանի քաղաքապետարանին, ինքնակամ շինությունը օրինականացնելու և նշված հողատարածքը սեփականության իրավունքով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին հանձնելու խնդրանքով:

12.11.2024թ-ին «Հայաստանյաց Առաքելական Սուրբ Եկեղեցի» ԿԿ-ն ստացել է ներքոնշյալ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքը.

Հ/Հ	Կադաստրային ծածկագիր	Տեսակ	Մակերես	Գրանցված իրավունքի տեսակ
1	01-006-0502-0007-002	Մանկական գեղագիտական կենտրոն	1927.75 քմ	Սեփականություն
2	01-006-0502-0007-002	պարիսպ	52.1 քմ, 78.15 խ.մ.	Սեփականություն

2. Հանրային կենտրոն՝ Սբ. Հովհաննես եկեղեցու տարածքում

Հիմնադրամն իրականացրել է Սբ. Հովհաննես եկեղեցուն կից իր երկրորդ կենտրոնի ճարտարապետա-տեխնիկական նախագծման և գրանցման աշխատանքները: Հիմնադրամը 2018 թվականին դադարեցրել է կենտրոնի շինարարական աշխատանքների մեկնարկը ի պատասխան շրջակա համայնքների անտուն բնակիչների խնդրանքների, մինչև իրենց հատկացված բնակարանների շինարարական աշխատանքների ավարտը: Հիմնադրամը պլանավորում է անդրադառնալ Սբ. Հովհաննես եկեղեցու տարածքում հանրային կենտրոնի կառուցման հարցին անապաստան անձանց բնակարանների պատրաստ լինելուց հետո:

2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շինարարության ծախսերի փոխհատուցման հայտանիշների բացակայության և Հիմնադրամի սեփական միջոցներով շինարարության կատարման պատճառով շինարարության արժեքը արժեզրկվել է մինչև իրացման զուտ արժեք, որը 2023թ. կազմել է զրո: 2024թ.-ի ընթացքում որևէ փոփոխություն տեղի չի ունեցել:

3. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այգի

Հիմնադրամը սկսել և ավարտել է ճարտարապետական և դիզայնի աշխատանքները Մայր Աթոռ Սբ. Էջմիածնի տարածքի այգում, սակայն վերակառուցման և բարեկարգման աշխատանքները դեռևս չեն սկսվել:

8 Դեբիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	976	732
Տրված կանխավճարներ	-	219
Այլ դեբիտորական պարտքեր	25	-
	1,001	951

9 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դրամարկղ	2	2
Բանկային հաշիվներ (դրամային)	4,418	1,121
Բանկային հաշիվներ (արտարժութային)	927	4,133
	5,347	5,256

10 Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Տարեսկզբի մնացորդ	6,806	6,053
Ստացված շնորհներ	989	3,165
Շնորհից եկամուտ	(1,632)	(2,412)
Տարեվերջի մնացորդ	6,163	6,806

11 Հետաձգված հասույթ

Ստացված նվիրատվությունները նախատեսվել են Հիմնադրամի գործունեության համար՝ ըստ վերջինիս նպատակների և ծրագրերի: Դոնորներից ստացված միջոցներն օգտագործվում են Հիմնադրամի մանդատին համապատասխանող, Հոգաբարձուների կողմից տարեկան ծրագրում և բյուջեում հաստատված ծրագրերի աջակցության համար:

Հիմնադրամը նվիրատվություններ է ստանում իր հիմնադիրներից և այլ աղբյուրներից: Հաշվետու ժամանակաշրջանում ստացված և օգտագործված նվիրատվությունները նկարագրված են ստորև ներկայացված աղյուսակում: Միջոցների օգտագործումն իրենից ներկայացնում է ծրագրային ուղիղ ծախսերի նպատակով ծախսված նվիրատվությունների միջոցները, անձնակազմի ծախսերը և վարչական ծախսերը:

	1 հունվարի 2023թ.	Շարժը 2023թ. Ընթացքում	31 դեկտեմբերի 2023թ.	Շարժը 2024թ. Ընթացքում	31 դեկտեմբեր 2024թ.
Ստացված նվիրատվություններ					
Դրամական	1,429,063	4,291	1,433,354	-	1,433,354
Բնաիրային	516,624	-	516,624	-	516,624
Ընդամենը նվիրատվություններ	**1,945,687**	**4,291**	**1,949,978**	**-**	**1,949,978**
Նվիրատվությունների օգտագործում					
Բնաիրային նվիրատվություն	(521,212)	(746)	(521,958)	-	(521,958)
Դրամական նվիրատվություններ	(303,695)	(52,150)	(355,845)	(40,700)	(396,545)
Աջակցություն գործունեությանը	(24,927)	-	(24,927)	-	(24,927)
Ծրագրային ծախսեր	(204,050)	(5,934)	(209,984)	(5,913)	(215,897)
	(1,053,884)	**(58,830)**	**(1,112,714)**	**(46,613)**	**(1,159,327)**
Ստացված նվիրատվությունների մնացորդ՝ հանած օգտագործումը (հետաձգված եկամուտ)	**891,803**	**(54,539)**	**837,264**	**(46,613)**	**790,651**
Կապիտալ ծրագրեր	(784,319)	-	(784,319)	-	(784,319)
Չօգտագործված նվիրատվությունների մնացորդ	**107,484**	**(54,539)**	**52,945**	**(46,613)**	**6,332**

12 Առևտրային կրեդիտորական պարտքեր

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,230	1,021
Արձակուրդի գծով պահուստ	715	715
Այլ պարտավորություններ	2,200	2,200
	4,145	3,936

13 Միջոցների իրացումից եկամուտ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Դրամական նվիրատվություններ	40,700	52,150
Իրականացված ծրագրերի արժեք	5,913	5,934
Բնաիրային նվիրատվություններ	-	746
	46,613	58,830

Ծրագրային ծախսերը ներկայացված են համաձայն նույն տարերի, ինչպես նշված է վերևի աղյուսակում:

Սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Հիմնադրամը նոր ֆինանսական միջոցների ներգրավման ուղղություններ չունի:

14 Այլ օգուտներ, զուտ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Հիմնական միջոցների օտարումից եկամուտներ	21,222	-
Արժեզրկման կորուստների գծով պահուստի վերականգնում	5,219	-
Այլ եկամուտներ	2,073	147
	28,514	147

15 Ֆինանսական եկամուտ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Այլ ծախսեր	1,377	3,433
	1,377	3,433

16 Այլ ֆինանսական ծախսեր, զուտ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Արտարժույթի փոխարժեքի ազդեցությունը		
Դեբիտորական պարտքեր	-	(255)
Դրամական միջոցներ	(1,988)	1,778
Կրեդիտորական պարտքեր	-	2
	(1,988)	1,525

17 Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
Ընթացիկ հարկ	4,916	684
Հետաձգված հարկ	-	-
	4,916	684

Հաշվետու տարվա համար ՀՀ շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18 % (2023թ.՝ 18 %)

Արդյունավետ հարկային դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)	2023թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	Արդյունավետ հարկային դրույքաչափ (%)
Շահույթ մինչև հարկումը	(11,039)		(36,414)	
Շահութահարկ 18% (2023թ. 18 տոկոս)	1,987	18.00	6,555	18.00
Չնվազեցվող ծախսեր	(6,903)	26.53	(7,239)	19.88
Շահութահարկի գծով ծախս	(4,916)	44.53	(684)	37.88

18 Ֆինանսական գործիքներ

18.1 Հաշվապահական հաշվառման քաղաքականություններ

Ֆինանսական ակտիվի, ֆինանսական պարտավորության և բաժնային գործիքի յուրաքանչյուր դասի համար կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականությունը և ընդունված մեթոդների մանրամասները, ինչպես նաև եկամտի և ծախսերի ճանաչման չափանիշներն ու հիմքերը ներկայացված են ծանոթագրություն 3.14-ում:

18.2 Ֆինանսական գործիքների կատեգորիաները

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված մնացորդները վերաբերում են ակտիվների և պարտավորությունների հետևյալ կատեգորիաներին.

Ֆինանսական ակտիվներ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Դեբիտորական պարտքեր		
Առևտրային դեբիտորական պարտքեր	976	732
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	5,347	5,256
Ժամկետային ավանդներ	22,683	68,858
	29,006	74,846

Ֆինանսական պարտավորություններ

Հազար դրամ	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2023թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,230	1,021
	1,230	1,021

19 Ֆինանսական ռիսկի կառավարման ուղղություններ

Կազմակերպությունն իր բնականոն գործունեության ընթացքում ենթարկվում է շուկայական (որը ներառում է արտարժութային), պարտքային և իրացվելիության ռիսկերի:

19.1 Ֆինանսական ռիսկի գործոններ

ա) Շուկայական ռիսկ

Կազմակերպության գործունեությունն ուղղակիորեն ենթարկվում է տոկոսադրույքային ռիսկերի փոփոխությունների ազդեցությանը և կապիտալի գնային ռիսկին:

բ) Արտարժութային ռիսկ

Կազմակերպությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով, հետևաբար ենթարկվում է արտարժույթային ռիսկին: Արտարժութի փոխարժեքային տատանումներից կախվածությունը հիմնականում առաջանում է նվիրատվություններից:

գ) Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Կազմակերպությունը ֆինանսական կորուստներ կարող է կրել: Հաշվետու ամսաթվի դրությամբ նշանակալի պարտքային ռիսկի կենտրոնացում առկա չէ: Առավելագույն պարտքային ռիսկը ներկայացված է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում՝ յուրաքանչյուր ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքով:

դ) Իրացվելիության ռիսկ

Կազմակերպությունը վարում է իրացվելիության կառավարման քաղաքականություն՝ պահելով բավարար դրամական միջոցներ և դրանց համարժեքներ, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ակտիվներ՝ ժամանակին գործառնական պարտավորությունները մարելու նպատակով:

Կազմակերպությունն ունի արտարժույթով գնանշված հետևյալ ֆինանսական գործիքները.

Հոդված 2024թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	976		
Ժամկետային ավանդներ	-	22,683	
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	4,420	17	910
	5,396	22,700	910
Ֆինանսական պարտավորություններ			
Փոխառություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,230	-	-
	1,230	-	-
Զուտ արդյունք	4,166	22,700	910

Հոդված 2023թ.	Հայկական դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
Ֆինանսական ակտիվներ			
Առևտրային դեբիտորական պարտքեր	732	-	-
Ժամկետային ավանդներ	-	68,858	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	1,123	774	3,359
	1,855	69,632	3,359
Ֆինանսական պարտավորություններ			
Առևտրային կրեդիտորական պարտքեր	1,021	-	-
	1,021	-	-
Զուտ արդյունք	834	69,632	3,359

Կազմակերպությունը ենթարկվում է ԱՄՆ դոլարի, Եվրոյի և Ռուբլու փոխարժեքի ազդեցությանը: Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Կազմակերպության զգայունությունը՝ ԱՄՆ դոլարի, Եվրոյի, աճին/նվազմանը: 10%-ը (2023թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2023թ.՝ 10%):

Հազար դրամ	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2024թ.	2023թ.	2024թ.	2023թ.
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն	2,270	6,963	91	336

20 Պայմանականություններ

20.1 Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Կազմակերպության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա կարող են տարբերվել Կազմակերպության ղեկավարության ներկա սպասումներից:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Կազմակերպության գործունեության վրա:

20.2 Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետության տնտեսության զարգացման ներկա փուլում ապահովագրության շատ տեսակներ զարգացման սկզբնական փուլում են և լայնորեն չեն կիրառվում: Սա է պատճառը, որ Կազմակերպությունն ապահովագրված չէ գործունեության ընդհատման, ակտիվների կորստի կամ այլ անձանց կողմից պարտավորությունների չկատարման հետևանքով վնասներ կրելու իրադարձություններից: Քանի դեռ Կազմակերպությունն ապահովագրված չէ համապատասխան ռիսկերից, առկա է ակտիվների կորստի կամ ոչնչացման վտանգ, ինչը կարող է անբարենպաստ ազդեցություն ունենալ նրա գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Բացառություն են կազմում սեփականատերերի կողմից ավտոմեքենաների պարտադիր ապահովագրությունները, որոնք հատուցում են վթարի դեպքում երկրորդ կողմին պատճառված վնասները:

20.3 Հարկեր

Հայաստանի Հանրապետության հարկային համակարգը համեմատաբար նոր է և աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, հարկային մարմնի պարզաբանումներով, որոնք կարող են հակասական կամ տարընթերցումների տեղիք տալ: Հարկային մարմինները կարող են ստուգումների արդյունքում տույժ, տուգանքներ նշանակել: Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Կազմակերպության ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության՝ իր մեկնաբանությունների վրա: Սակայն հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և եթե դրանք հաստատվեն, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

20.4 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ղեկավարության համոզմամբ Կազմակերպությունը բավարարում է շրջակա միջավայրի հետ կապված Կառավարության պահանջները, և վստահ է, որ Կազմակերպությունը շրջակա միջավայրի հետ կապված ընթացիկ էական պարտավորություններ չունի: Այնուամենայնիվ, Հայաստանի Հանրապետությունում, շրջակա միջավայրի վերաբերյալ օրենսդրությունը զարգացման փուլում է, և դրա հավանական փոփոխություններն և օրենդրության մեկնաբանություններն ապագայում կարող են էական պարտավորություններ առաջացնել:

20.5 Դատական հայցեր

2024թ. դեկտեմբերի 31-ի և սույն ֆինանսական հաշվետվությունների վավերացման ամսաթվի դրությամբ Հիմնադրամն ունի հետևյալ դատական գործընթացը.

ԵԴ2/5339/02/25 քաղաքացիական գործով, Հիմնադրամի ներկայացուցիչը էլեկտրոնային եղանակով դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ Հիմնադրամը լուծարելու պահանջի մասին:

21 Հաշվետու ամսաթվից հետո տեղի ունեցող դեպքեր

Ինչպես նշված է ծանոթագրություններ 13-ում և 20.5–ում 2025թ.մարտ ամսին Հիմնադրամի խորհուրդը որոշում է կայացրել լուծարել Հիմնադրամը և դիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան՝ Հիմնադրամը լուծարելու պահանջի մասին:

22 Գործարքներ կապակցված կողմերի հետ

22.1 Վերահսկողություն

Հիմնադրամի ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Հիմնադրամի տնօրենը՝ Գագիկ Արզումանյանը։

Հիմնադրամն իր գործունեության ընթացքում իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ։ Կապակցված կողմերի հետ իրականացված գործարքները հետևյալն են.

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազար դրամ	Մնացորդը 2024թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2024թ.		Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Աշխատավարձ	-	(5,724)	5,724	-

	Մնացորդը 2023թ. դեկտեմբերի 31-դրությամբ	2023թ.		Մնացորդը 2022թ. դեկտեմբերի 31-դրությամբ
Աշխատավարձ	-	(5,919)	5,919	-

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել և ստորագրվել են Կազմակերպության ղեկավարության կողմից 2025թ. հունիսի 17-ին՝

Տնօրեն

Գագիկ Արզումանյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Անտոնյան

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 27.06.2025 11:39